

շատ հին է՝ պէտք է հողին հաւասար կտրէ կամ կրակով այրէ . ասով հին բուսեցող կրփճանան , և գարնան նոյն արմատէն աւելի աղուոր ու մատ . զաշ ճիւղեր՝ կուտան որ խիստ աղէկ կը ծաղկին . խոշոր կակաչները՝ հողէն հանելու ու արմատը բաժնելու , ետքը պարարտ հողի մէջ տնկելու է որ մեծնան . տաշտաթաղ ըրած մեխակներն ալ հարաւային կողմը տաքուկ տեղ մը դնելու է :

Պարտէզի ծառերուն պտուղները թուղաններուն յետէն պահելու հնարք :

Ի ՈՆՏՐԱՅԻ պարտիզպանական ընկերութիւնը փորձով տեսեր է մօտ տարիներս , որ պարտէզի պտուղները թռչուններուն փնասէն ազատելու համար շատ աղէկ հնարք է՝ կատուները ծառերուն պահպան դնելը . վասն զի պարտիզպանին մէկը չորս հինգ կատուով բոլոր իր պարտէզը կը պահպանէ եղեր թռչուններէն շատ տարիներէ ՚ի վեր :

Լձէն մէկ կատուին վիզը մէյմէկ օղակով՝ շղթայ՝ անցուցած է . երբոր պտուղները կը հասունան , ծառին մօտ ցից՝ մը կը տնկէ , ու շղթային ծայրը անոր կանցընէ , կատուին կերակուրը՝ ջուրն ու բնակարանն ալ քովը կը պատրաստէ . ասով թռչունները ամենեւին չեն կրնար մօտենալ ծառին : Ուրիշ անգղիացի պարտիզպան մը ուղեւորով որ միայն մէկ երկու կատուով մեծ երկիր մը պահպանէ , երկու ցից տնկեր է իրարմէ շատ հեռու , և ան ցիցերէն իրարու չուն մը ձգեր է , չունին վրայ ալ անցուցեր է կատուին շղթան . ասով մէկ երկու կատու բաւական կը լինէ եղեր մեծ երկիր մը պահպանելու : Եւ բանս ուրիշներն ալ փորձեցին ու շատ աղէկ յաջողեցաւ :

1 Ընդ :

2 Ընդայից :

3 Հալի :

4 Զիւժի :

5 Գաւազ :

Եւրոպայի Գլ եղած Բոյսերուն Թիւը :

ՀԻՄԱԿՈՒԱՆ Եւրոպայի երեւելի բնագէտներէն մէկը հաշիւ ըրեր է , որ Եւրոպայի գտնուելէն վերջը անկէ 2343 տեսակ բոյս եկեր է Եւրոպա . Բարեյուսոյ գլխէն 1700 . նոյն չափ մըն ալ եկած է Չինու երկրէն , արեւելեան Հնդկաստանէն , նոր Հուլանտայէն , Եսիային ու Բիւրիկէին այլեայլ կողմերէն . և ասոնք ամէնը մէկէն 120,000 տեսակէն աւելի են կրսէ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Լձիք :

ՍԻՂԻՆ գարու սկիզբներէն ինչուան վերջերը խիստ խորունկ ու խորհրդաւոր արհեստ կամ գիտութիւն սեպուած էր ալքիմիա՝ ըսուածը : Եսիկայ քիմիական արհեստին կամ բնալուծութեան բարակն է կրսէին ետեւ ինքողները . և ինչուան հիմա արեւելք կը գտնուին աս գիտութիւն պարծեցողներ : Լձքիմիային վախճանն է մէյմը՝ ոսկի շինել . անոր համար ոմանք ոսկեգործութիւն ալ գըրեր են անունը . երկրորդ՝ գեղ մը շինելու ամէն հիւանդութեց ճար ըլլայ . երրորդ՝ այնպիսի նիւթ մը գտնել որ ամէն բան լուծէ . չորրորդ՝ այնպիսի խմոր մը գտնել որ ինչ բանի որ գըրայի՝ իւրաքանչեւ քաւ ըսուածը հանէ : Մէկ քանի առասպելաբան պատմիչներու խօսքին նայելով՝ ալքիմիան՝ Լոյի ատենն ալ գիտցող կայ եղեր :

1 Ալիք բառին ստուգաբանութիւնը յայտնի չէ , ոմանք կրսեն թէ յունաց Χημεία (քիմիա) բառն է՝ արաբացուց ալ կամել մասնիկովը բաղադրած , բայց ուրիշները կրսեն թէ աս ալքիմիա բառը արաբացուց ծաղկելէն առաջ ալ գրոց մէջ յիշուած ըլլալով , եգիպտական բառ կրնայ ըլլալ :